

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՓԸՐԻՋԻ ԸՉԳԸՏԻՆ ՄԸՏԵՆՆԳՐԱՆ

ԵՒ

ՀԱՅՈՑ ԶԵՌԱԳԻՐՆԵՐ.

Նախորդեց համակներին մէկին մէջ ես ցոյց տուի համառօտ կերպով՝ այն պատմական համակրութիւնը, որ ունեցել է եւ ունի Ֆրանսիան դէպի Հայոց ազգը: Յիշեալ նամակիս մէջ յառաջ բերած աղացոյցների վրայ այժմ շտապում եմ աւելացնել դարձեալ մինչահաւոր աղացոյց:

Խօսքս Հայոց ձեռագիրների մասին է, որք գտանվում են Փարիզի Ազգային մատենադարանի մէջ: Ինչպէս յայտնի է՝ սա դարձւոյ երեւելի մատենադարանների մէջ կարելի է ասել՝ երեւելագոյնն է շատ կերկարէր Խօսքս եւ շատ կհեռանայի իմ առարկայից՝ եթէ կամենայի սորա գէթ համառօտ նկարագրութիւնը ներկայացնել: Վասն որոյ՝ բաւականաւորով յիշել որ՝ սորա մէջ կան համարեա ընդ որ հին եւ նոր ազգերի եւ ցեղերի լեզուով ձեռագիրներ, ես անցնում եմ դէպի Հայկական ձեռագիրները:

Այս մատենադարանի մէջ եղած Հայոց ձեռագիրների առաջին համառօտ ցուցակը կազմուած է միայն 1735 թվականին: Այս ցուցակը կազմել է երեւելի արեւելագէտ եւ հայագէտ Հայր Վիլլէֆրուա Ֆրանսերէն լեզուով: Սորա համառօտ յառաջաբանից երեւում է

որ՝ Ֆրանսիացիք արդէն 17րդ դարու սկզբներից սկսել են մեծ ուշադրութիւն դարձնել Հայոց մատենագրութեան վերայ: Կարգինալ Ֆլէօրին ոչ միայն մեծ եռանդով ժողովում էր Հայոց ձեռագիրներ, այլ եւ աշխատում էր տարածել Ֆրանսիայի մէջ Հայերէն լեզուն սովորելը, այն նպատակով երկտասարգ գիտնականներ է ուղարկում Հայաստանի կողմերը այդ լեզուն աւելի լաւ սովորելու համար: Այս հետաքրքրելի յառաջաբանից թարգմանում եմ հետեւեալ տողերը:

Ահա մինոր աշխարհ բացվում է ընթերցողների աչքի առաջ եւ սոյն ցուցակի մէջ՝ սա է միակ ժողովածու Հայկական ձեռագիրների ոչ միայն Ֆրանսիայում, այլ գուցէ աւելի հարուստ ամբողջ Եւրոպայում. բայց այս միայն սկիզբն է Մատենադարանի:

Մատենադարանը պարտաւոր է Սրբազան կարդինալ Ֆլէօրին այս նոր հարստութիւնով եւ բանասէր անձինք կարող են մեծ յոյս տածել որ Նորին Սրբազնութիւնը ոչ ինչ չի խնայի առ ի պաշտպանել եւ խրախուսել ճաշակը, որը կստանան Հայկական մատենագրութեան համար: Մի աղնիւ երկտասարգ ըստ իւր ցանկութեան ուղարկուած է արդէն նորա հրամանով Կ. Պօլիս, որ տեղից նա պիտի գնայ մինչեւ Հայաստան լեզուն (Հայոց) սովորելու համար: Նորին Սրբազնութիւնը կարողացաւ ժողովել այնպիսի թանկագին գանձեր: Այն արդեօք աւելի հետաքրքրելի եւ ուշադրութեան արժանի բան քան թէ այս պետութեան (Հայոց) պատմու-

թիւնը, պետութեան՝ որ այնպէս հռչակաւոր էր ամենատարօրէնակ յեղափոխութիւններով: Յաղթող եւ յաղթուած հետզհետէ՝ տեսնում ենք Հայաստանը տիրապետող Առիայի ընդարձակ պետութեան վերայ մի քանի Ժամանակ, եւ ասլա ստորագրուած մի քանի տիրապետողներին: Ձնայելով կարճատեւ յաջողութեանց եւ երկարատեւ ձախողութեանց փոխադարձութեան, Հայերը չմոռացան մշակել գիտութիւնները եւ մատենագրութիւնը զարմանալի եռանդով եւ մինչեւ անգամ նախանձ պատճառելով նոյն իսկ Յոյներին, որոնցից աւելի գերազոյն էին իւրեանց ընդարձակ եւ հարուստ գիտութեամբ հինգերորդ դարում, եթէ հաւատանք այս ազգի մի հռչակաւոր եւ յարգելի հեղինակին^{*}): Հայաստանի մեծ Կաթողիկոսները հրաշակեցին նորա անունը ոչ միայն իւրեանց խորագոյն իմաստութեամբ, այլ եւ իւրեանց գիտութեամբ, իւրեանց ճարտասանութեամբ եւ յաճախ իւրեանց բանաստեղծական տաղանդով: Նորա Թագաւորները եւ իշխանները չկարծեցին որ աստուածաբանութիւնը իմանալը եւ ուսումնասիրելը լինէր անվայել եւ հակառակ այն հոգատարութեան, որ հարկաւոր էր ունենալ քա-

ղաքական գործերի վրայ, եւ նոցանից շատերը չկարմրեցան տեսել իւրեանց անունները գետեղուած քերականներէ եւ բանաստեղծներէ շարքում: Ամբողջ ազգի այս ճաշակը առ հանճարի արտադրութիւնը եւ առ բոլոր գեղեցիկ գիտութիւնները՝ թելադրեց նորան (Ազգին) դասել մինչեւ անգամ իւր թարգմանիչները բանասերներէ եւ Կաթողիկոսներէ շարքում: Ահա այս միջոցով, ի դէպ ասել, այնպէս վատ կերպով արհամարհուած մի քանի գիտականներէ կողմից, Հայերը գտել էին գաղանկը լինել պահպանող Եւրոպայի եւ Ասիայի գիտութեանց, նոցա Հոմերոսը վեցալատի ոտանաւորով, նոցա Եւսէբիոսը աւելի հին քան թէ մերը, նոցա պատմութիւնը կայորներէ (Թանկագին գիրք, որի գտնելու յոյսը չէ պէտք դառնալ կորցնել), կարգարացներն այս ազգի յարգանքը դէպի իւր հմուտ թարգմանիչները եւ մեկնիչները, որոց նա տալիս է յաճախ անունս Աշխարհի Լոյս: Ամեն տեսակ բանաստեղծութիւնը, թէ ըստ երբայական ճաշակի, թէ ըստ արարական հանճարի, որչափ իւր քանակութեամբ, նոյնչափ եւ իւր չափով (ոտք)՝ այնպէս յաջող մշակուած էր Հայաստանում, որ չպիտի զարմանանք եթէ գտնում ենք բանաստեղծներ ամեն տեսակ գրութեան եւ պայմանների մէջ: Ես չեմ խօսի այստեղ Հայաստանեայց եկեղեցւոյ որդւոյիս Հայրերի եւ վարդապետների մասին: Նոցա ճարտասանութիւնը, նոցա գրուածքների ծանրութիւնը եւ նոցա բարոյականութեան մաքրութիւնը ստիպում են սի-

(*) Ներսէս Ե. (Շնորհալի) մեծ Կաթողիկոս Հայաստանի, 1168 թ., իւր վկայածութեամբ մէջ՝ Յիսուս Սրբի Միաձին Հօր՝ վկայում է այս հետեւեալ միակ տողով, որ եւ յառաջ եմ բերում այս տեղ. — «Մին զի Յունաց զերգանցեալ»:

րել կարգալ նոցա եւ զգալ բոլոր գինը։
Նատ կերկարէր խօսքս՝ եթէ մի խօս-
քով չյիշէի անտուածաբանները, Ս.
Պրոց մեկնիչները, ժամակարգութեան
հեղինակները, փիլիսոփաները, պատ-
մաբանները, թարգմանիչները, քերա-
կանները, հմուտ հեղինակները երա-
ժշտութեան եւ այլ տեսակ գիտնական-
ները, զորս յառաջ է բերում հարկա-
ւորաբար մի ազգ։ որը մի գանձ է հա-
մարում փրել գիտութիւնները։ Ես կը-
խօսիմ այս հռչակաւոր մարդոց վերայ
այն քննութեան մէջ, որ ես պատրաս-
տում եմ Հայոց ձեռագիր եւ տպած
գրքերի մասին, իսկ քննութիւնը այն
գրքերի՝ որոց ցուցակը այս տեղ դնում
եմ, արդէն վերջացրած է . . . :

Ահա այս ցուցակից երեւում է որ
մատենադարանում եղել է 1735 թ.
միայն 130 հատ Հայկական ձեռագիր,
որոց մեծ մասը գնել է 1728 թ. Հայր
Սէվին Կ. Պօլսում, ուր ուղարկուած է
եղել թագաւորի հրամանով Յունարէն
ձեռագիրներ ժողովելու համար, Յե-
տոյ, 1739 թ. մատենադարանը կազ-
մել է իւր ձեռագիրների ընդհանուր
բաղմահատոր մայր ցուցակ Լաթինե-
րէն լեզուով, որոյ առաջին հատորի
մէջ արեւելեան լեզուների ձեռագիր-
ների շարքում դրած է եւ Հայոց ձե-
ռագիրների ցուցակը։ Սա պարունա-
կում է իւր մէջ 138 վերնագիր, եւ
յաւելուածում 7 վերնագիր, ընդամե-
նը 145։

Մատենադարանը աւելի եւ աւելի
հարստանալով հեաղհետէ արեւելեան
եւ Հայկական ձեռագիրներով՝ կազմել

է 1840 թուականներին առանձին
Ֆրանսերէն լեզուով յաւելուած ձեռա-
գիր ցուցակ զանազան ձեռագիրների
համար, ուր հայկական ձեռագիրների
թիւը հասնում է 128։ Վերջապէս՝
1860 թուականներին Մխիթարեան մի-
աբան Հ. Սուքիաս Պարոնեանը կազմել
է մի ընդհանուր ցուցակ Ֆրանսերէն
լեզուով յատկապէս բոլոր հայկական
ձեռագիրների համար, որոց թիւը ընդ-
ամենը է 247։ Բայց այս ցուցակը ունի
մեծ թերութիւններ. նախ՝ սա չէ ման-
րամասն, այս ինքն թէ՛ ո՞վ է ձեռագրի
հեղինակը, ո՞րտեղ է գրած, ե՞րբ, եւ ին
չէ ցցուցած օրինաւոր կերպով, եւ եր-
կորդ՝ ֆրանսերէն լեզուով գրուած-
քը խիստ շատ սրբագրութիւններ ունի
թէ քերականական ուղղագրութեան եւ
թէ ձեռագիրների բովանդակութեան
վերաբերեալ. սոքա արած են օտար ձեռ-
քով եւ զանազան ժամանակ. իսկ Հայ-
երէն գրած վերնագիրները նոյնպէս
ունին շատ սրբագրութիւններ կարմիր
թանաքով։ Ահա այս սրբագրութիւննե-
րը ցոյց են տալի որ Հ. Պարոնեանը չէ
նայել իւր գործի վերայ արժանաւոր
ուշադրութեամբ եւ զգուշութեամբ,
եւ այժմ այդ ցուցակը միանգամայն
անյարմար է գործածութեան համար
յատկապէս այդ սրբագրութեանց պատ-
ճառով, Բայց աւելի զարմանալին այն
է որ՝ Հ. Պարոնեանը, ինչպէս յատուկ
է Մխիթարեաններին, այդ ցուցակը շի-
նել է կրօնական մոլեռանդութեան
գործիք եւ մոցրել է նորա մէջ բո-
լորովին անտեղի եւ մի գրոց ցուցա-
կի համար բոլորովին օտար ծանօթու-

Թիւններ: Այսպէս զօ. երես 57, համար 90, նա ասում է. — «Նորին Յովհաննու Իմաստասիրի եւ Կաթուղիկոսի Հայոց Օձնեցւոյ ընդդէմ երեւութականաց. հռչակաւոր ձեռագիր, որոյ գիւտը մեծ ազմուկ յարուց գիտնական աշխարհում եւ յաղթութիւն տուեց Հ. Միքայէլ Չամչեանին, որ հաստատեց մի երկար քննութեան մէջ (տըպած իւր Հայոց պատմութեան ծանօթութիւններին մէջ, Հ. Պ.) Յովհաննէս Իմաստասիրի՝ Կաթուղիկոսի եւ հռչակաւոր հեղինակի «պատմութեան» (հայտնի է ընդհանրապէս ընդունած կարծիքը, որով համարում են այս մեծ մարդը, մի քանի կեղծ գրութեանց համաձայն, իբրեւ իրիստ հակառակ Քաղկեդոնի Ժողովոյն» (7):

Այժմ Փարիզի Ազգային մատենադարանի մէջ կայ 273 հատոր Հայոց ձեռագիրներ՝ հետեւեալ բովանդակութեամբ.

1. Աստուածաբանութիւն, այն է՝ Հին եւ Նոր Կտակարան, Մեկնութիւն Ս. Գրոց, Մաշտոց, Շարական, Ճառքնափր, Կանոնադիրք եւլն	159
2. Պատմութիւն	68
3. Փիլիսոփայութիւն	3
4. Թուաբանութիւն եւ աստղագիտութիւն	40
5. Բժշկականութիւն	8
6. Լեզուադիտութիւն, այն է Քերականութիւն, Բառգիրք, եւլն	28
7. Բանաստեղծութիւն	10
8. Իրաւաբանութիւն	4

9. Թղթակցութիւն (Քուղթ Դատիժ Եպիսկոպոսի Սպահանայ առ Լուղովիկոս ԺԴ թագաւոր Դաղիոյ) 4

275

Այս ձեռագիրներից շատերը պարունակում են իւրեանց մէջ բազմաթիւ այլ եւ այլ գրութեանքներ, զօ. համար LXXXVII (պատմական բովանդակութեամբ) 79 յօդուած, համար LXXXV (աստուածաբանական բովանդակութեամբ) 17 յօդուած, եւլն: Բոլոր ձեռագիրներին մէջ կայ 716 յօդուած, ոմանք ընդարձակ եւ ոմանք համառօտ. սոքա գրած են բոլորը գրոց լեզուով, բայց մէկը Մխիթար Գօշի համառօտ Գատաստանագիրք՝ գրած է Հայոց տառերով եւ Թաթարի բառերով (Գրիմու Թաթարերէն): Ձեռագիրների մէջ հնագոյններն են.

Համար	Ք. Փշէլ:
XCI	1255
LI	1257
XII	1276
LIV եւ LXXIII	1300
XXXII	1311
LIX	1319
XLV	1355
XXI	1380
XXVI	1400

Մնացեալ ձեռագիրներին մի մասն չունին ամենեւին թուական, եւ միւս մասն գրութեան են 16 եւ 17-րդ դարերում: Աւելի սակաւաթիւ են այն ձեռագիրները, որոց մէջ ցուցած են ընդօրինակողի անունը, գրութեան տեղը, եւլն:

Շատ ցանկալի կլինէր որ՝ մի աշխատասէր, բանին տեղեակ եւ բարեմիտ

(*) Կարօյիկոյրիւն հասկացիր, ընթերցող:

մարդ յանձն առնէր կազմել լիակատար եւ մանրամասն ցուցակներ Հայոց ձեռագիրներէ եւ տպած գրքերէ, որք կան Փարիզի, Լոնտոնայի, Վիեննայի եւ այլ եւրոպական քաղաքների մատենագարաններէ մէջ: Պէտք է ասել որ՝ եւրոպայի մինչեւ անգամ փոքրիկ քաղաքների մէջ, ուր կան հասարակական մատենագարաններ, կան միշտ մի քանի հատ Հայոց ձեռագիր եւ տպած գրքեր: Ես լսեցի որ Հ. Պարոնեանը ահա քանի ուտրի է կազմում է Լոնտոնայի մատենագարանի Հայոց գրքերի ցուցակը: Եթէ այդ ցուցակը պիտի նմանի իւր փարիզի ցուցակին, լաւ կլինէր որ՝ իզուր չաշխատէր Հ. պատուականը:

Փարիզի մատենագարանում կան նաեւ շատ աղագրած Հայերէն գրքեր, բայց ինձ անկարելի եղաւ փոքրիշատէ ձիշտ գաղափար կազմել նոցա մասին: Վասն զի նոցա վերնագիրները ըստ բովանդակութեան ցրուած են մատենագարանի ընդհանուր ցուցակի հարիւրաւոր հաստ հատորների մէջ:

Վ. Վ. Բ.

Ի 1/10 Յուլի 1878 թ.

Փարիզ:

ՀԻՒՍՈՒԱՄ

ԲԱՆԻՑ ՆԱԽՆԻ ՊԱՏՄԱՐԱՅ ՀԱՅՈՑ

Պ Ա Տ Մ Ո Ւ Թ Ի Ի Ն Ժ Ա Մ Ա Ն Ա Կ Ա Յ

ՄԱՐԶՊԱՆՈՒԹԵԱՆ Ի ՀԱՅՍ

Եյս վերնադրով՝ անցեալ 1877 թվականի վերջերում ի շնորհս եւ ծախիւք Մեծ. Պ. Մ. Սանատարեանցի հրատարակուեցաւ Եղեքսանդրապոլեցի Երզոյ Աորապետ Յ. Աստանեանցի շարահիւսած եւ երկք հատորէ բաղկացած մի երկասիրութիւն, որ ոչ միայն մեր հայկական զրօականութեան մէջ իւր արժանաւոր տեղը ունի, այլեւ կրօնասիրութեան եւ հայկական ազգային զգացմանց եռանդը եւ աշխոյժը մանկուոյն սրտից եւ արեան մէջ տածել բորբոքելոյ համար ընտիր եւ կարեւոր դասագիրք լինելոյ համապատշաճ յարմարութիւնը եւ արժանաւորութիւնը ունի:

Մարդպանութեան պատմութեան մէջ գլխաւոր նիւթն է եւ յատկապէս ընդարձակ տեղ զբաւած է Վարդանանց պատերազմը եւ նահատակութիւնը, եւ Պ. Աշխատասիրողն ժամանակակից պատմադրաց եւ մատենագրաց խօսքերէն ընտիր եւ կարեւոր մասերը ծաղկաքաղելով եւ շարադասելով՝ Հայոց մարդպանութեան ժամանակաց եւ անցից վերայ՝ իւրաքանչիւր պատմագրի առանձին առանձին հաղորդածէն աւելի ընդարձակ եւ ամփոփ ուշադրութեամբ ըստ կարգին պատմութիւնը շարահիւսեր է եւ զետեղեր առաջին հատորում, եւ միևնոյն ժամանակ թէ ժամանակակից պատմադրաց մէջ երեցած տարբերութեանց հետ պատմութեան մէջ կարեւոր եւ ուշադրութեան